

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2017-2021թթ.



Կազմել է Սևան համայնքի ղեկավար Սարգիս Մուրադյանը

Հաստատվել է Սևան համայնքի ավագանու՝ 26.12.2016թ. թիվ 11-Ն որոշմամբ

2016

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք	3-4
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն	5-36
2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն	5-6
2.2 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը	7-11
2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը	12-17
2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները	18-29
2.5 Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ	30-35
2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների /ՈԻԹՀՍ/ վերլուծություն	36
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում	37-57
3.1 Համայնքի զարգացման տեսլական	37-38
3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակներ	39-57
4. ՀՀԶԾ ֆինանսավորում	58
5. ՀՀԶԾ մոնիտորինգ	59

Հավելվածներ

- ✓ Ծրագրերի անձնագրեր
- ✓ ՀՀԶԾ-ի ֆինանսավորման ամփոփաթերթ
- ✓ ՀՀԶԾ մոնիտորինգի ամփոփաթերթ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ



Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի 5-ամյա զարգացման ծրագրի առանցքում համայնքային ռազմավարական ուղղությունների ուրվագծումն է, որոնց շնորհիվ որդեգրվելու է զարգացման մի նոր փուլ:

ՀՀԶԾ կազմելիս առաջնորդվել ենք ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից մշակված մեթոդաբանությամբ:

Սևան համայնքն իր աշխարհագրական դիրքով, մարդկային և բնական ռեսուրսներով, արդեն իսկ իրականացրած ծրագրերով, ստեղծած լավագույն ավանդույթներով նախանշել է ապագայի իր տեսլականը: Շատ կարևոր է, թե ինչպիսի համայնք ենք ուզում ունենալ 5 տարի անց և ցանկալի արդյունքի հասնելու համար առաջիկա տարիների ընթացքում հիմնական ինչ ուղղություններ ենք որդեգրելու այդ արդյունքին հասնելու համար:

Մեր կարևորագույն նպատակն է՝

ունենալ զարգացած, կազմակերպված, հարմարավետ և ներկայանալի համայնք:

Հաշվի առնելով համայնքի ձեռքբերումները, անցած ճանապարհը, առկա հիմնախնդիրները և առաջնահերթությունները, համայնքային գերակայությունները՝ առանձնացվել են այն ոլորտները, որոնց միտված են լինելու մեր ծրագրերն ու դրանցով պայմանավորված գործողությունները՝

- ✓ Տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացում՝ նորագույն տեխնոլոգիաների ներդրման, իրազեկման գործիքների կիրառման, մասնակցային կառավարման ապահովմամբ.
- ✓ Տեղական գործարար պայմանների բարելավում - գործարարների աջակցում, գործարար որակների զարգացում, արտադրական տարածքների վերականգնում, ձեռնարկատիրական նախաձեռնությունների օժանդակում՝ աշխատատեղերի ստեղծմամբ.
- ✓ Կրթական, մշակութային, մարզական օբյեկտների հիմնանորոգում, պայմանների բարելավում՝ ոլորտային բարեփոխումների ապահովմամբ.
- ✓ Սոցիալական ենթակառուցվածքների պահպանում և ստեղծում - բնակչության համար էական նշանակություն ունեցող ծառայություններից օգտվելու հնարավորություն՝ առողջապահական, կրթական, մշակութային, սպորտի, հասարակական անվտանգության ենթակառուցվածքների ապահովմամբ.
- ✓ Բնակչության կենսամակարդակի բարձրացում, կյանքի որակի բարելավում, շահերի ապահովում՝ քաղաքային ենթակառուցվածքների վերականգնմամբ, ստեղծմամբ, գործարարության աջակցման ծրագրերի ներդրմամբ.
- ✓ Տրանսպորտի բարելավում՝ համայնքների միջև կապի աշխուժացման, ազատ տեղաշարժի հնարավորությունների, մարդկային հոսքի ապահովմամբ.
- ✓ Զբոսաշրջային գործի զարգացում՝ պատմամշակութային արժեքների, զբոսաշրջային ռեսուրսների ենթակառուցվածքների ստեղծման և բարելավման, քաղաքային

տնտեսությունը զարգացնելու, նոր աշխատատեղեր ստեղծելու, «Սևան» բրենդը նորովի ներկայացնելու համար.

- ✓ Բարեկարգ և հարմարավետ միջավայրի ստեղծում՝ հանգստի գոտիների, կանաչ տարածքների պահպանման և ավելացման, բակային տարածքների բարեկարգման ներառմամբ.
- ✓ Քույր քաղաքներ ցանցի ընդլայնում, լավագույն փորձի ընդօրինակում և տարածում.
- ✓ Բնակարանային ֆոնդի պահպանում.
- ✓ Պետական-համայնքային-մասնավոր գործընկերության ակտիվացում:

Համայնքը կենդանի օրգանիզմ է և պահանջում է ամենօրյա ուշադրություն, աշխատանք: Ու չնայած իրականացվող աշխատանքներին՝ զգացնել են տալիս նաև համայնքային հիմնախնդիրները, որոնք էլ հաճախ դառնում են խոչընդոտ ծրագրերն իրականացնելիս:

Համայնքում առկա հիմնախնդիրների մեծ մասը տասնամյակների վաղեմություն ունի. բնակարանային ֆոնդի, ներհամայնքային ճանապարհների և փողոցների, կրթամշակութային օջախների շենքային պայմանների արդի վիճակն ուղղակիորեն խոչընդոտում է մի շարք ծրագրերի իրականացմանը:

Տեղական բյուջեի սղությունը, հարկերի հավաքագրման ոչ բավարար վիճակը, ներդրումային ծրագրերի ոչ բավարար լինելը, գործազրկությունը, աշխատատեղերի պակասը, արդյունաբերական ձեռնարկությունների բացակայությունը, ներդրումային ծրագրերի սակավությունը, բնակչության անվճարունակությունը, համայնքային մի շարք ենթակառուցվածքների արդի վիճակը, Սևանի զբոսաշրջային կարգավիճակ չունենալը, երիտասարդների՝ բուհական ուսումնառությունից հետո համայնք չվերադառնալը, մարդկանց հարմարվողականությունն այն հիմնական հիմնախնդիրներն են, որոնց ուղղությամբ էլ առաջիկա տարիներին պետք է իրականացվեն հիմնարար քայլեր:

Հիմնարար քայլերի հիմքը ՀՀԶԾ-ն է, որի մշակման, կազմման աշխատանքներում ներգրավվել են համայնքի ղեկավարին կից գործող երկու խորհրդակցական մարմինները, համայնքապետարանի աշխատակազմը, համայնքում գործող ՀԿ-ների ներկայացուցիչները, ակտիվ և նախաձեռնող բնակիչները:

Ծրագրի մշակման ընթացքում կարևորվել են տարբեր խմբերի առաջարկությունները, դիտողությունները, «Սևան երիտասարդական ակումբ» ՀԿ-ի կողմից կազմակերպված ֆորումի ընթացքում ստեղծված «Համայնքային հիմնախնդիրներ. լուծման ուղիներ» փաթեթում ներառված ծրագրային դրույթները, որի շնորհիվ ապահովվել է մասնակցային բաղադրիչը:

Կարծում են՝ բոլորիս ցանկությունն ու նպատակը մեկն է՝ ապրել լավ ու բարեկեցիկ պայմաններում, զարգացած ու ներկայանալի համայնքում, իսկ տեղական իշխանության համար այդ ցանկությունն իրագործելն ամենօրյա աշխատանք է, ու ՀՀԶԾ-ն էլ փաստաթղթային այն մեկնարկն է, որ դառնալու է պետություն-համայնք-բնակիչ-մասնավոր սեկտոր համագործակցության երաշխիքն ու շարժիչ ուժը:

2. Սևան համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն



Սևան համայնքը Գեղարքունիքի մարզի 5 քաղաքային համայնքներից մեկն է:

Սևան քաղաքը գտնում է ծովի մակերևույթից 1925մ բարձրության վրա, Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափին՝ լճից 200-250մ հեռավորության վրա:

Բնակավայրը 1842թ-ին հիմնադրել են եկվոր ռուս աղանդավորները և կոչել են Ելենովկա: 1935թ. այն վերանվանվեց Սևան: 1961թ. բնակավայրին շնորհվեց շրջանային ենթակայության քաղաքի կարգավիճակ /մեկ ավանով և տասը գյուղով/, իսկ 1967թ.-ին՝ հանրապետական ենթակայության:

Հայաստանի վարչատարածքային նոր բաժանմամբ Սևանը դարձավ ինքնուրույն համայնք և ներառում է Սևան քաղաքը, Ցամաքաբերդ, Գոմաձոր թաղամասերը, Գագարին գյուղը:

Սևան համայնքը զբաղեցնում է 1777.08 հա հողատարածք:

2016թ-ին հաստատվել է համայնքի /բնակավայրի/ լրամշակված գլխավոր հատակագիծը, որը լուրջ նախադրյալներ է ստեղծում համայնքի զարգացման, առկա ռեսուրսների նպատակային օգտագործման, ներդրումների առումով:

Իր աշխարհագրական դիրքով Սևանը Հայաստանի ամենալեռնոտ շրջաններից է. գտնվում է Արեգունի, Փամփակի և Գեղամա լեռնաշղթաների հանգուցակետում:

Համայնքն իր ափամերձ տարածքներով զբոսաշրջությամբ, հանգստի, առողջարանային հիանալի բնակավայր է: Այն առանձնանում է ջրային ռեսուրսներով, բնապահպանական և մշակութային հուշարձաններով:

Ներկայումս սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթություններից է փոքր և միջին բիզնեսի, զբոսաշրջության զարգացումը:

Համայնքում զարգացած է ծառայությունների մատուցման ոլորտը, գործում են կրթական, առողջապահական, մշակութային հաստատություններ, սպասարկող կազմակերպություններ և ընկերություններ, բանկային մասնաճյուղեր, կապի օպերատորների մասնաճյուղերի գրասենյակներ:

Համայնքի բնակարանային տնտեսության պահպանումն իրականացվում է գործող 6 համատիրությունների միջոցով, որոնք ընդգրկում են 213 բազմաբնակարան շենք:

Սևանում է գտնվում «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ը, որի բնագիտական թանգարանն էլ Սևանա լճի, տարածաշրջանի կենդանական և բուսական աշխարհի, ժողովրդագրության, ավանդույթների ամբողջական ցուցանմուշների և ցուցադրությունների եզակի վայր է:

Սևանում լույս են տեսնում «Սևան» թերթը «Ափ» ամսագիրը, գործում է «STV-1» հեռուստաընկերությունը:

Համայնքը՝ ի դեմս ՏԻՄ-ի, ապակենտրոնացված գործընկերային հարաբերություններ է հաստատել Ֆրանսիայի Գրենոբլ (2004թ.), Լեհաստանի Բրոդնիցա (2010թ.), Բելառուսի Օսիպովիչ (2011թ.), Իտալիայի Ավիլիանա (2016թ.), Չեխիայի Պրահա-Վինոր (2016թ.), քաղաքների, Երևանի Էրեբունի վարչական շրջանի (2015թ.) հետ:

Համայնքում գործունեություն են իրականացնում մի շարք հասարակական կազմակերպություններ, ասոցիացիաներ:

Աղյուսակում ներկայացված է Սևան համայնքի բնակչության սեռատարիքային կազմը՝ համաձայն 2016թ. 1-ին կիսամյակի տվյալների

Բնակչության սեռատարիքային կազմ	Ընդհանուր	իգական	արական
Բնակչության թվաքանակը	24139	12015	12124
Առկա	21935	11031	10904
Մինչև 1 տարեկան	254	116	138
1-2 տարեկան	280	139	141
3-4 տարեկան	411	182	229
5-6 տարեկան	441	193	248
7-10 տարեկան	812	391	421
11-14 տարեկան	757	343	414
15-17 տարեկան	653	288	365
18-22 տարեկան	1291	599	692
23-45 տարեկան	9874	4560	5314
46-62 տարեկան	6182	3411	2771
63 և ավելի տարեկան	3170	1639	1531

2.2 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը

Սևան համայնքի ընդհանուր բյուջեն 2016-2017թթ.

Հ/Հ	2016թ.	2017թ.	Աճ կամ նվազում 2016թ. համեմատ /տոկոս/
1. Համայնքի ընդհանուր բյուջեն ա/թ	680.8	593.9	87.2
-վարչական բյուջե	497.1	483.8	97.3
- ֆոնդային բյուջե	183.7	110.1	59.9
2. Սեփական եկամուտներ	125.9	137.2	109.0
3. Սեփական եկամուտներ տեսակարար կշիռը վարչական բյուջեի մեջ	25.3	28.4	112.3

Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը՝ 126մլն. դրամ (22%):

Համայնքի հիմնական արդյունաբերական ձեռնարկությունների թիվը 8 է, հիմնական սպառման շուկաները՝ Սևանի տարածաշրջան, Հայաստանի Հանրապետության տարածք, Ռուսաստանի Դաշնություն:

Զբոսաշրջային հետաքրքրություններ կայացնող հուշարձաններ

Սևան քաղաքից ընդամենը 6 կմ հեռավորության վրա՝ Երևան-Թբիլիսի մայրուղուն հարող տարածքում է գտնվում Սևանա թերակղզին՝ հեթանոսական շրջանից մինչև միջնադար, մինչև մեր օրերը ձգվող հնություններով: Հատկապես աչքի են ընկնում Սուրբ Առաքելոց և Սուրբ Կարապետ եկեղեցիները, որոնք կառուցվել են 874թ-ին: Առաքելոց եկեղեցու աջ խորանում է տեղավորված իր հրաշագործ հասկություններով հայտնի «Ամենափրկիչ» խաչքարը / 1653 թ. /:

Թերակղզում է գտնվում նաև Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցը, որը հոգևորականներ է պատրաստում Հայ Առաքելական եկեղեցու համար:

2015թվ-ի մայիսի 31-ին քաղաքի Վլ. Կարապետյանի անվան հրապարակին կից իր դռները բացեց Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցին՝ ֆրանսահայ բարերար Սարգիս Բեդոյանի և նրա ընտանիքի մեկենասությամբ: Եկեղեցական կոչումով սարկավագ Սարգիս Բեդոյանը ցեղասպանությունից փրկված մարդկանց ժառանգը լինելով՝ Սևանում կառուցեց եկեղեցի՝ ի հիշատակ իր ծնողների (ճարտարապետ՝ Արտակ Ղուլյան):

«Փյունիկ» հուշախաչքար (քանդակագործ՝ Մուրադ Հովակիմյան)

Եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող հուշախաչքար (քանդակագործ՝ Հրաչ Կարապետյան):

Դպրոցական, նախադպրոցական, արտադպրոցական, այլ ուսումնական կրթական հաստատություններ

Սևան համայնքում գործում է 4 հիմնական, 3 միջնակարգ և 1 ավագ դպրոց, արհեստագործական ուսումնարան, պետական քոլեջ, ֆրանկոֆոն ակումբ, Ջրային մարզաձևերի մարզադպրոց:

5 նախադպրոցական ուսումնական հաստատություն՝ 4-ը՝ քաղաքում, 1-ը՝ Գագարին գյուղում:

Համայնքում գործում է 3 նախակրթարան՝ թիվ 1 «Բողբոջ» մանկապարտեզի և թիվ 5, թիվ 6 միջնակարգ դպրոցների հենքի վրա:

Հովհ. Այվազովսկու անվան արվեստի դպրոց,

Վ. Սարգսյանի անվան երաժշտական դպրոց,

Ն. Դազարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց,

Վ. Ստեփանյանի անվան Գրադարանների կենտրոնացված համակարգ,

Համայնքային մշակութային կենտրոն

Հ. Իգիթյանի անվան գեղագիտական դաստիարակության Սևանի մասնաճյուղ

«Սևան» համալիր

Հ/Հ	Կրթական հաստատության անվանումը	Սահմանված տեղերը	Քանի հոգի է հաճախում
1	Մ. Մաշտոցի անվան N 1 հ/դ	650	750
2	Յա. Զարոբյանի անվան N 2 հ/դ	320	146
3	Գնդապետ Վլ. Կարապետյանի անվան N 3 հ/դ	1100	920
4	N 4 հ/դ	1170	322
5	Յամաքաբերդի N 5 մ/դ	192	91
6	Գոմաձորի N 6 մ/դ	200	125
7	Գազարինի մ/դ	395	229
8	Ավագ դպրոց	1200	300
9	Պետական քոլեջ	500	450
10	Արհեստագործական ուսումնարան	250	113
11	Երաժշտական դպրոց	հարմ.	171
12	Հովհ. Այվազովսկու անվան արվեստի դպրոց	հարմ.	399
13	Համայնքային մշակութային կենտրոն	հարմ.	170
14	Ն. Դազարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց	հարմ.	335
15	Թիվ 1 «Բողբոջ» մ/մ	320	95
16	Թիվ 2 «Զարթոնք» մ/մ	110	90
17	Թիվ 3 «Հեքիաթ» մ	110	175 /լից. հիմ. վրա/ կից կառույցների հաշվին
18	Թիվ 4 «Գալիք» մ/մ	110	170
19	Գազարինի մ/մ	110	60

Առողջապահական հաստատություններ

«Բժշկական կենտրոն» ՊՓԲԸ (ներառում է մանկական և մեծահասակների պոլիկլինիկա, հիվանդանոց բուժհաստատությունները)

«Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՊՓԲԸ

«Լայոնս» ակնաբուժական կլինիկա

«Անախ» ախտորոշման կենտրոն

Հ/Հ	Հաստատության անվանումը	Քանի հոգու համար է նախատեսված /մահճակալ/	Ծանոթություն
1	«Բժշկական կենտրոն» ՊՓԲԸ	60 /ըստ լիցենզիայի/	25 վիրաբուժական 10 թերապիա 15 գինեկալոգիա 5 մանկական 5 ինֆեկցիոն
2	«Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՊՓԲԸ	420	421 հիվանդ
3	«Լայոնս» ակնաբուժական կլինիկա	30	2016թ. նոյեմբերի 1-ի դրությամբ 1937 այցելու, 342 վիրահատություն

Բնակչության թվաքանակը - 24950 /մարդահամարի տվյալներով/
21.750 /առկա/, որից`

Գազարին գյուղ - 1712, Ցամաքաբերդ թաղամաս - 829, Գոմաձոր թաղամաս - 1113

Տնտային տնտեսությունների թիվը - 6581

Աշակերտների թիվ - 2816, որից 274-ը սովորում է ավագ դպրոցում

Նախադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախող երեխաներ - 720, որից` 650-ը` մանկապարտեզ, 70-ը` նախակրթարան

Հայրենական Մեծ պատերազմի վետերաններ - 6

Արցախյան հերոսամարտի մասնակիցներ - 495

Արցախյան հերոսամարտում զոհվածներ - 46

2016թ. ապրիլյան քառօրյայի մասնակիցներ - 52

Համայնքում զբաղված բնակչության թվաքանակը - 3099, որից` 2529-ը` գրանցված վարձու աշխատող, 570-ը` անհատ ձեռնարկատեր

Սևանի զբոսաշրջային գրասենյակի տվյալներով` 2015թ. հուլիս-օգոստոս ամիսներին Սևան համայնք /ներառյալ` ավիամերձ տարածք/ զբոսաշրջիկների հոսքը` 21.527 մարդ, 2016թ-ին` 32.878:

01.11.2016թ. դրությամբ - Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների թվաքանակը` 1289, որից` ընտանեկան նպաստ - 930, սոցիալական նպաստ` 281, հրատապ օգնություն` 78

Կենսաթոշակառուների թվաքանակը` 4100

Հաշմանդամ անձանց թվաքանակը` 2100

Գործազուրկների թվաքանակը` 1374 (գրանցված)

Հ/Հ	Ընդհանուր	արական	իգական
Գործազուրկների թվաքանակը	1374	423	951
Տարրական	2	1	1
Միջնակարգ	920	321	599
Միջին մասնագիտական	351	61	290
Բարձրագույն	101	30	71

Համայնքի հողերի բաշխվածությունն ըստ տեսակների, հա.

		Համայնքում առկա	պետական
1.	Համայնքի վարչական տարածքը, այդ թվում՝	860.12	661.00
2.	գյուղատնտեսական նշանակության հողեր	107.54	7.60
3.	պահուստային հողեր	-	-
4.	բնակելի շինությունների տակ հողեր	537.01	34.28
5.	արդյունաբերական, արտադրական շինությունների տակ հողեր	168.40	3.28
6.	ընդերքօգտագործման հողեր	168.40	3.28
7.	ճանապարհների տակ հողեր	7.89	71.77
8.	առողջապահական, հանգստավայրերի, մարզական ու պատմամշակութային նշանակության հողեր	24.24	71.71
9.	անտառային հողեր	-	4.1
10.	ջրային ֆոնդի հողեր	1.40	61.73
11.	հատուկ պահպանվող տարածքներ, արգելոցներ	20.24	478.09
12.	Այլ բնակավայր (գ. Գագարին)		-

Տեղեկատվություն համայնքի բազմաբնակարան շենքերի վերաբերյալ

		քանակը, հատ	ընդհանուր բնակելի մակերեսը, մ2
1	Ընդամենը բնակարաններ	5884	272562.92
2	1 սենյականոց բնակարաններ	1623	53451.76
3	2 սենյականոց բնակարաններ	1839	74710.33
4	3 սենյականոց բնակարաններ	1841	93239.06
5	4 և ավելի սենյականոց բնակարաններ	574	50516.97

Համայնքի բազմաբնակարան շենքերի բաշխվածությունն ըստ կառուցման ժամանակահատվածի.

		շենքերի քանակը, հատ	դրանցում բնակարանների քանակը, հատ	ընդհանուր բնակելի մակերեսը, մ2
1	մինչև 10 տարի առաջ կառուցված	0		
2	11-20 տարի առաջ կառուցված	0		
3	21-50 տարի առաջ կառուցված	213	5884	272562.92
4	50 և ավելի տարի առաջ կառուցված	0		

2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը

Համայնքի վարչական տարածքում պետության կողմից առաջիկա 5 տարիների համար նախատեսվող /շարունակվող/ հանրապետական, մարզային ծրագրերը և միջոցառումները

✓ Ս. Զարարյանի անվան մշակույթի պալատի հիմնանորոգում /2016-2017թթ./.

Համայնքը կունենա հիմնանորոգված, ժամանակակից պահանջներին համապատասխան մշակութային ենթակառուցվածք, որը կգործի շուրջտարի՝ ապահովելով համայնքի և տարածաշրջանի մշակութային կյանքի բնականոն ռիթմը, ամբողջ ծավալով կգործարկվեն շենքային պայմանները, միաժամանակ կբարելավվեն մշակույթի պալատի շենքում գործող ՀՈԱԿ-ների և թանգարանի գործունեությունը:

✓ Սևան-Երևան խճուղի վերգետնյա անցում /2016թ./.

Սևանա լճի առափնյա հատվածի որոշակի հատվածը քաղաքին կապող վերգետնյա անցումը դառնալու է անվտանգ երթևեկության, հետիոտնի ազատ տեղաշարժի երաշխիք՝ ապահովելով և մեծացնելով մարդկանց երկկողմանի հոսքը:

✓ Համայնքի սոցիալական ծառայության կենտրոնի ստեղծում /2017թ-ից/.

Համայնքում գործող 3 սոցիալական ծառայությունների միավորմամբ ոչ միայն ուղորտային բարեփոխումներ են արձանագրվելու, այլ նաև բնակչության համար ստեղծվելու են առավել հարմարավետ և մատչելի պայմաններ, սոցիալական բոլոր խմբերի համար ապահովելու են հավասար հնարավորություններ, մարդկանց խնդիրների լուծման համար պահանջվելու են ավելի քիչ ժամանակ և ռեսուրսներ:

Հարևան համայնքների հետ համատեղ առաջիկա 5 տարիների համար նախատեսվող /շարունակվող/ միջհամայնքային համագործակցության նպատակային ծրագրերը և միջոցառումները

✓ Մարզամշակութային և սոցիալական ծրագրեր - Սևան-Էրեբունի վարչական շրջան /շարունակական/.

Սևան համայնքը և Երևանի Էրեբունի վարչական շրջանը համագործակցում են 2015թ. հուլիսից: Համագործակցությունը ներառում է օրինակելի փորձի փոխանակումներ, փոխայցելություններ, ընդհանուր նշանակության խնդիրների քննարկումներ տեղական ինքնակառավարման, կրթության, մշակույթի, առողջապահության, սպորտի, զբոսաշրջության բնագավառներում:

Այս ծրագրերի շնորհիվ համայնքում աշխուժանում է մշակութային կյանքը, երաժշտական, արվեստի դպրոցի սաների փոխայցելությունները, երաժշտական և արվեստի օջախներ, կազմակերպված միջոցառումները, նախադպրոցական ուսումնական հաստատություններում իրականացվող փորձի փոխանակման քննարկումները, սոցիալական մեղմացման խնդիրներին ուղղված ծրագրերը կրում են շարունակական բնույթ:

Համագործակցության շնորհիվ մեծանում են ոչ միայն շփումները, այլ նաև նոր ասպարեզ է բացվում տաղանդավոր երեխաների համար, միջոցառումները կրում են որակական նոր շեշտադրումներ:

Միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, արտասահմանյան երկրների համայնքների հետ համագործակցության շրջանակներում նախատեսվող /շարունակվող/ ծրագրերը և միջոցառումները

✓ Խ. Արուվյանի անվան ավագ դպրոցի հիմնանորոգում - Համաշխարհային բանկ /2016թ-ից/.

Սևանի տարածքաշրջանում գործում է մեկ ավագ դպրոց և դպրոցի հիմնանորոգմամբ կստեղծվեն կրթական բարելավված միջավայր և պայմաններ, որոնց շնորհիվ կլեծանա ավագ դպրոց հաճախողների թիվը, կրթական այդ աստիճանը կդառնա առավել գրավիչ՝ վերածվելով նաև տարածաշրջանի գիտակրթական կենտրոնի:

✓ Սևանի թիվ 2 «Զարթոնք» մանկապարտեզի հիմնանորոգում - Տարածքային զարգացման հիմնադրամ (2016-2017թթ.).

Մանկապարտեզի հիմնանորոգմամբ և կահավորմամբ կստեղծվի հարմարավետ և ապահով միջավայր նախադպրոցական տարիքի երեխաների համար, որտեղ հաճախողների թիվը ավելանալու է, ընդգրկվելու են նաև հատուկ կարիք ունեցող երեխաները:

✓ «Բժշկական կենտրոն» ՊՓԲԸ-ի մասնաշենքի կառուցում - Համաշխարհային բանկի վարկային միջոցներով՝ «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» ծրագրի շրջանակներում (2016-2018թթ.).

ՀՀ կառավարության 2015թ. հուլիսի 2-ի N 815-Ն որոշմամբ «Սևանի հիվանդանոց» ՓԲԸ-ն և «Սևանի պոլիկլինիկա» ՓԲԸ-ն միաձուլման ձևով վերակազմակերպվելով՝ ստեղծվում է ՓԲԸ-ն: Վերակազմավորումը կատարվել է ՀՀ կառավարության որոշման և Համաշխարհային բանկի պահանջներին համապատասխան:

Համաձայն նույն որոշման՝ պոլիկլինիկական մասնաշենքի հարևանությամբ կառուցվելու է և շահագործման հանձնվելու բժշկական կենտրոնի նոր հիվանդանոցային մասնաշենքը, որտեղ տեղակայվելու են կենտրոնի բոլոր հիվանդանոցային ծառայությունները:

Համաձայն նախագծի՝ նորաստեղծ բժշկական կենտրոնը լինելու է երկհարկանի շինություն, որը կառուցվելու է պոլիկլինիկայի հարավային հատվածում՝ ճակատային մասում:

Կենտրոնն ունենալու է դիագնոստիկ բաժանմունք, լաբորատորիա, մանկաբարձական ընդունարան, մանկաբուժական- թերապևտիկ, մանկաբարձական, վիրաբուժական բաժիններ, վերակենդանացման բաժանմունք, վիրահատարանային բլոկ, հիվանդասենյակներ / 60 մահճակալ /, դեղատուն, լվացքատուն և կենտրոնի համար անհրաժեշտ այլ սենյակներ:

Մասնաշենքի հարակից տարածքում կկառուցվեն նաև համապատասխան ենթակառուցվածքներ:

Բժշկական կենտրոնը սպասարկելու է Սևան համայնքի, տարածաշրջանի և հարակից համայնքների բնակչությանը: Զինված լինելով ժամանակակից սարքավորումներով և տեխնիկական հնարավորություններով՝ նպաստելու է տեղում և առավել մատչելի ձևով որակյալ բուժօգնության իրականացմանը, ֆինանսական ռեսուրսների խնայողությանը:

✓ «Ուսումնառող քաղաքներ» ծրագիր - ՅՈՒՆԵՍԿՕ (2016թ-ից).

Ծրագրի նպատակն է խթանել ուսումնառության գործընթացի կայուն զարգացումը, որի հիմքում լավագույն փորձի փոխանակման միջազգային հարթակի ստեղծումն է: Ծրագրի ընթացքում իրականացվելու են ուսումնառության տարբեր բաղադրիչներին միտված դասընթացների, սեմինարների անցկացում, որոնց շնորհիվ համայնքն ունենալու է կրթության ոլորտում նորարական նոր ծրագրեր՝ ներառական կրթությունից մինչև հեռահար ուսուցում:

Սա նաև խթանելու է համայնքի աշակերտության և երիտասարդության հետաքրքրությունը ուսումնառության նկատմամբ:

✓ «Կոտայքի մարզի կոշտ թափոնների կառավարում» ծրագիր - Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկ (2014թ-ից).

Ծրագրի առանցքում աղբահանության խնդիրների կարգավորումն է: Ծրագիրն ունի մի քանի բաղադրիչ և հեռահար նպատակներ, որն ընդգրկում է բնապահպանական և սոցիալական գործողություններ, նոր աղբավայրի շահագործում, մաքրության ծառայությունների դիմաց վճարների հավաքագրման նոր մեխանիզմներ, նոր և ժամանակակից տեխնիկայի, մասնագիտացված սարքավորումների տրամադրում:

2015թ. ծրագրի շրջանակներում կնքվել է համապատասխան պայմանագիր, կատարվել է նախապատրաստական գործողություններ, մշակվել են հետագա քայլերն ու աշխատանքների տեխնիկական բաղադրիչները: Այս ծրագրի իրականացմամբ համայնքը հնարավորություն կունենա աղբահանության ոլորտում գրանցել լուրջ ձեռքբերումներ՝ և տեխնիկապես, և աշխատանքների որակական բարելավման առումներով:

✓ «Քաղաքային կանաչ լուսավորություն» ծրագիր - ՄԱԿ-ի զարգացման ծրագրի շրջանակներում (2015թ-ից).

Ծրագրի իրականացմամբ ներդրվում և կիրառվում են լուսավորության էներգաարդյունավետ սարքեր և տեխնոլոգիաներ, մշակվել է քաղաքային լուսավորության համակարգի արդիականացման հայեցակարգ, իրականացվել է պիլոտային ծրագիր: Ծրագրի ընթացքում էներգատար լուսատուները փոխարինվելու են ժամանակակից, էներգաարդյունավետ և երկարակյաց լուսատուներով, որը համայնքի համար ֆինանսական ռեսուրսների խնայողության միջոց է, ինչպես նաև արտաբյուջետային հաշվին խնայված ֆինանսական միջոցները փոխանցելով, հնարավորություն է ընձեռվում կատարել ոլորտային այլ աշխատանքներ, մասնավորապես՝ սարքավորումների և տեխնիկական վերազինման տեսքով:

✓ «Վերապատրաստողների վերապատրաստում վերականգնվող էներգիաների ոլորտում», 2015թ-ից նաև՝ «Ֆինանսավորում վերականգնվող էներգիաների ոլորտում» - Սևան-Գրենորլ ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում.

Արևային օրերի քանակով Սևանն ամենաարևայիններից է՝ 265-270 օր: Հաշվի առնելով կլիմայական այս իրողությունը և այլընտրանքային էներգիայի ստացման նկատմամբ համաշխարհային միտումները՝ Սևան-Գրենորլ ապակենտրոնացված

համագործակցության շրջանակներում ներառվեց նաև վերականգնող էներգետիկայի ոլորտը:

Ծրագրի նախնական նպատակն էր զարգացնել վերականգնվող էներգիան Հայաստանում, մասնավորապես՝ Սևանի տարածաշրջանում: Առաջին քայլը հայ դասավանդողների վերապատրաստումն էր Ֆրանսիայում, որպեսզի վերջիններս էլ ուսումնական ծրագրեր անցկացնեին իրենց ուսանողների շրջանակում: Արդյունքում վերապատրաստված մասնագետները տեղում ուսուցանեցին իրենց սովորողներին՝ պատրաստելով ոլորտի տեղադրումներ կատարող վերապատրաստված տեխնիկներ, որոնք Սևանի արհեստագործական ուսումնարանի սովորողներն են: Բնագավառին վերաբերող ամբողջական տեղեկատվության ապահովման և նորարական գաղափարների, սովորողների գործնական կարողությունների զարգացման նպատակով պետական քոլեջում կազմակերպվել են հեռավար և ավտոմատացման ուսուցումներ, ձևավորվել է լաբորատորիա, որին հաջորդել է ոլորտային գիտելիքներ ստացած սևանցի և ֆրանսիացի ուսանողների համատեղ իրականացված ծրագրավորման գործընթացը այլընտրանքային էներգիայի ստացման, դրա գործնական կիրառման բնագավառում: Պիլոտային ծրագրերին զուգահեռ իրականացվում է 3 տարվա ընթացքում վերադարձելիության սկզբունքով գործող ֆինանսավորման ծրագիրը, որի շրջանակներում սեփական առանձնատներում և բնակարաններում տեղադրվել և տեղադրվելու են արևային ջրատաքացուցիչներ և ջեռուցման համակարգ:

Ծրագրի արդյունքում արձանագրվել են հետևյալ գործողությունները՝ վերականգնվող էներգետիկայի վերաբերյալ 60 ժամանոց մոդուլի դասավանդման ստեղծում, դասավանդում նշված հաստատություններում, զուգահեռ ֆրանսերենի դասավանդում՝ 74 դասաժամով, ձևավորվել է երկու լաբորատորիա, կա մասնագիտացված և վերապատրաստված թվով 32 երիտասարդ, արևային ֆոտովոլտայիկ 10 համակարգերի տեղադրում, երկու ուսումնական հաստատությունները վերազինվել են անհրաժեշտ սարքավորումներով և համակարգչային տեխնիկայով, կատարվել են 20-ից ավելի ջերմային տեղադրումներ: Առաջիկայում շարունակվելու է ջերմային տեղադրումները:

✓ Պրահա-Վինոր այգու կառուցում և բարեկարգում - Սևան Պրահա-Վինոր ապակենտրոնացված համագործակցություն (2017թ-ից).

Սևան-Պրահա-Վինոր ապակենտրոնացված համագործակցության Հուշագիրը ստորագրվել է 2016թ. սեպտեմբերին, որի ուղղություններից է նաև փորձի փոխանակման և մշակութային բաղադրիչը: Հաշվի առնելով այս՝ ձեռք է բերվել նախնական պայմանավորվածություն և առանձնացվել է համապատասխան տարածք Սևան քաղաքում Պրահա-Վինոր անվանմամբ այգու բարեկարգման, հետագայում նաև խաղամիջոցների տեղադրման համար: Քաղաքի այդ հատվածում ազատ ժամանցի վայր չկա, և այս այգին դառնալու է միջոցառումների և հանգստի կազմակերպման լավագույն վայր և տեղացիներին, և զբոսաշրջիկների համար: Միաժամանակ լուծվելու են այդ հատվածի կանաչապատման, ծառատնկման հարցերը, բնապահպանական որոշ խնդիրներ:

- ✓ «Զբոսաշրջային գործի զարգացում» ծրագիր - Սևան-Ավիլիանա (Իտալիա) ապակենտրոնացված համագործակցություն (2017թ-ից).

Սևան-Ավիլիանա ապակենտրոնացված համագործակցության Հուշագիրը ստորագրվել է 2016թ. հունիսին: Համագործակցության ուղղություններից մեկը զբոսաշրջային բաղադրիչն է: Զբոսաշրջությունը Սևան համայնքի համար գերակա ուղղություն է, որը միաժամանակ ենթադրում է մի շարք գործողությունների իրականացում տարբեր ծրագրերի տեսքով: Ծրագրերը ներառելու են իտալացի զբոսաշրջիկների տուրերի կազմակերպում, զբոսաշրջային գործի բարելավմանը նպաստող ենթակառուցվածքների կառուցում կամ վերականգնում, մշակույթների երկխոսություն: Այս ծրագրերի շնորհիվ համայնքում ոչ միայն կիրականացվեն ֆինանսական ներդրումներ, որը զարգացման երաշխիք է, այլ նաև կավելանան փոխայցելությունները, կաշխուժանան սպասարկման ծառայությունները, կավելանան և կբացվեն նոր աշխատատեղեր, երիտասարդների համար կստեղծվի գրավիչ միջավայր:

Տեղացի և արտասահմանյան բարերարների կողմից իրականացվող ծրագրերը

- ✓ Մշակութային, կրթական ծրագրեր - իտալահայ բարերար Գարեն Կոկչյանի կողմից /2011թ-ից/.

Իտալահայ բարերար Գարեն Կոկչյանը տարիներ շարունակ Սևան համայնքում իրականացնում է բարեգործական ծրագրեր որոնք ունեն կրթական, մշակութային, սոցիալական ուղղվածություն: Ժամանակի ընթացքում այդ ծրագրերի բարեգործական կողմը իր տեղը զիջել է երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող ծրագրերի իրականացմանը՝ հաշվի առնելով համայնքային առաջնահերթությունները: Ըստ նախնական պայմանավորվածության՝ առաջիկա տարիներին, գնահատելով համայնքային կարիքները, ծրագրերը կունենան շարունակություն:

- ✓ Մարզական համայնքի կառուցում - ՌԴ-ում բնակվող սևանցի Հայկ Վարդանյանի կողմից /2014թ-ից/.

Սևան համայնքի մարզամշակութային կյանքի ակտիվացման, ինչպես նաև զբոսաշրջային գործի բարելավման նպատակով իրականացվող այս ծրագիրը լինելու է կենսունակ, քանի որ ներառում է մի շարք բաղադրիչներ, որոնք հետաքրքրություն են ներկայացնում և տեղացիների, և զբոսաշրջիկների համար: Ենթակառուցվածքի կառուցումից և կահավորումից հետո համայնքում ոչ միայն կբացվեն համապատասխան աշխատատեղեր, այլ նաև կաշխուժանա ներհամայնքային կյանքը, մարդկանց հոսքը քաղաք, ինչն էլ ենթադրում է ֆինանսական հոսքեր:

Համայնքի վարչական տարածքում մասնավոր ընկերությունների կողմից նախատեսվող /շարունակվող/ ծրագրերը, ներդրումները և միջոցառումները

- ✓ Գագարին գյուղի ջրահեռացման ցանցի և ջրամբարի բաշխիչ ցանցի կառուցում, բարելավում - «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ /2017թ-ից/. Ֆինանսավորումը՝ Գերմանական վերակառուցման բանկի և Եվրոպական ներդրումային բանկի

Գնահատելով Գագարին գյուղում ջրամատակարարման ոլորտում առկա առաջնահերթությունները և դրանից բխող խնդիրները՝ այս ծրագիրն արժանացել է հավանության և իրականացվելու է: Ծրագրի նպատակն է՝ ջրակորուստների կրճատում (տեխնիկական և կոմերցիոն), ջրամատակարարման անընդմեջության ապահովում, ջրի որակի ստանդարտների պահպանում:

Ջրամատակարարման ենթակառուցվածքների վերականգնման և նորացման հիմնարար այս գործընթացի շնորհիվ Գագարինի բնակչության համար կլուծվեն մի շարք խնդիրներ՝ որակյալ խմելու ջուրը կդառնա մատչելի, ջրամատակարարման գրաֆիկում կարձանագրվեն էական տեղաշարժեր, միաժամանակ լուծվելու են առողջապահական և շրջակա միջավայրի հետ կապված մի շարք հարցեր:

- ✓ Սևան քաղաքի ջրահեռացման համակարգի բարելավում - «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ /2017թ-ից/. Ֆինանսավորումը՝ Գերմանական վերակառուցման բանկի և Եվրոպական ներդրումային բանկի

Ծրագրի նպատակն է՝ բարելավել քաղաքի ջրահեռացման ցանցի աշխատանքը՝ միաժամանակ լուծելով նաև բնապահպանական և հակահամաճարակային մի շարք խնդիրներ:

Ծրագրի իրականացումը խիստ կարևոր է և արդիական, ենթակառուցվածքների բարելավման առումով՝ անհրաժեշտություն:

Ֆուտբոլի մարզադաշտի կառուցում - Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա /2016-2017թթ./

Սևան քաղաքում մարզական կյանքի աշխուժացման, մասսայական միջոցառումների անցկացման, պատանիների և երիտասարդության շրջանում ազատ ժամանցի կազմակերպման նպատակով իրականացվում են մի շարք ծրագրեր, որոնցից հերթականը ֆուտբոլի մարզադաշտի կառուցումն է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի կողմից:

Աշխատանքները մեկնարկել են 2016թ-ին: Ֆուտբոլի արհեստական խոտածածկով մարզադաշտն ապահովվելու է համապատասխան տեխնիկական միջոցներով և կահավորանքով:

Համայնքի կողմից ապահովվելու է մանկապատանեկան մարզադպրոցի լիարժեք գործունեությունը, մանկապատանեկան թիմերի շուրջտարյա մարզումների գործընթացի իրականացումը, ինչպես նաև մարզադպրոցի թիմերի՝ ՀՀ առաջնություններին մասնակցելու համար անհրաժեշտ բոլոր պայմանները:

2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

Համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծության համար ելակետ ընդունենք համայնքային բյուջեի 2013-2015թթ. եկամուտների փաստացի կատարողական ցուցանիշները

	2013թ.	2014թ.	2015թ.
Ընդամենը համայնքի բյուջեի եկամուտներ	445.8	468.0	507.1
Վարչական բյուջե, որից	427.1	457.5	491.5
սեփական եկամուտներ	109.0	115.4	111.0
դոտացիա, սուբվենցիա	318.1	342.1	380.5
Ֆոնդային բյուջե	18.7	10.5	15.6

Համայնքի ֆինանսական իրավիճակի հիմնական մասի՝ 75.0 %, պայմանավորված է պետական աջակցությամբ, միայն 25% է գոյանում տեղական հնարավորություններից: Սեփական եկամուտների հավաքագրումը չնայած ունի աճի տեմպ, ընդամենը՝ 2-4%, սակայն էական դեր չի կարող ունենալ համայնքի զարգացման գործում:

Համայնքին ցուցաբերված պետական աջակցությունը լուծում է միայն համայնքային ենթակառուցվածքների պահպանման խնդիրը:

Ակնկալել բարձր, անգամ միջին մակարդակի զարգացման տեմպեր, առաջիկա տարիներին անհնար է:

Համայնքի բյուջեի եկամուտների հաջորդ 5 տարիների կանխատեսումն առայժմ բարձր ցուցանիշներով ապահովելն անհնար է, որը պայմանավորված է հանրապետության ֆինանսա-տնտեսական իրավիճակով, արտագաղթի մակարդակով, ֆիզիկական և իրավաբանական անձանց անվճարունակությամբ, առկա պարտքերի աճով:

Հեռանկարում առկա պարտքերի նվազումն արձանագրելու է զարգացման որոշակի աճ:

Համայնքի բյուջեի եկամուտները հաջորդ տարիների համար կաճեն միջին տարեկան հաշվարկով 8-10%-ով, կամ 2020թ. համայնքի բյուջեն կկազմի մոտ 540.0 մլն. դրամ՝ հաշվի առնելով առաջընթացի ներկայիս տեմպերը:

Սեփական եկամուտների նվազագույն շեմը կկազմի 140.0մլն. դրամ:

Համայնքի զարգացման հիմնական ցուցանիշը պայմանավորված է ֆոնդային բյուջեով, ինչը ներկայումս ու առաջիկայում էլ բացակայում են: Համայնքը չունի հողատարածքներ, որոնք օտարվեն:

Օտարումից համայնքային բյուջե մուտքագրված գումարները կնպատակուղղվեն համայնքային ենթակառուցվածքների բարելավմանը, ինչն իր հերթին զարգացման լուրջ խթան է:

Ներկայումս վարչական բյուջեի սուղ միջոցներից ուղղվում են ֆոնդային բյուջեի՝ կապիտալ ծախսերի չնչին մասի ֆինանսավորմանը:

Համայնքային բյուջեի եկամտային ուղղություններն են՝

- ✓ պաշտոնական տրանսֆերտները՝ դոտացիա, սուբվենցիա, որը կազմում է համայնքի բյուջեի 75%-ը.
- ✓ սեփական եկամուտները, որը կազմում է համայնքի բյուջեի 25%-ը.

Սեփական եկամուտներ	հողի հարկ և գույքահարկ իրավաբանական և ֆիզիկական անձանցից
	տեղական տուրքեր
	պետական տուրքեր
	հողի, գույքի վարձավճարներ
	հողի օտարումներ
	այլ եկամուտներ
	փոխառու միջոցներ /մինչ օրս անհասանելի է համայնքի համար/

Համայնքի բյուջեի ծախսերը՝

Համայնքի բյուջեի ծախսերի ավելացումը, մակարդակը պայմանավորված է եկամուտների ավելացմամբ:

Ներկայումս բյուջեի ծախսերի կատարումն առավել վատ վիճակում է, քան եկամուտների կատարումը: Այն ուղղորդվում է ոչ միայն համայնքային ենթակառուցվածքների պահպանման ֆինանսավորմանը, այլ նաև պարտքերի մարմանը:

Ընթացիկ եկամուտների այն մասը, որն աճում է կամ ստեղծվում, համայնքային կազմակերպությունների պահպանման, շենքային պայմանների բարելավման, աշխատավարձի բարձրացման խնդիրների լուծմանն ուղղվելու փոխարեն ուղղվում է կապիտալ ծախսերի պարտքերի սպասարկմանը:

Համայնքի բյուջեի 2013-2015թթ. փաստացի ծախսերի կատարման ցուցանիշները

Հ/Հ	Բյուջե	2013թ.	2014թ.	2015թ.
1	Համայնքի	445.5	467.9	499.2
2	վարչական	427.2	456.9	490.2
3	ֆոնդային	18.3	11.0	9.0

Ֆոնդային բյուջեի ծախսերը համայնքի ընդհանուր բյուջեում կազմում են 2-4%, մնացած մասը վարչական՝ ընթացիկ ծախսեր են՝ 96-98%:

Համայնքի բյուջեի ծախսերը ըստ կառուցվածքի

Հ/Հ		2013թ.		2014թ.		2015թ.	
		փաստացի ծախս	տեսակարար կշիռը	փաստացի ծախս	տեսակարար կշիռը	փաստացի ծախս	տեսակարար կշիռը
1	Ընդամենը վարչական բյուջեի ծախսեր, որից՝	427.2	100.0	456.9	100.0	490.2	100.0
1.1	Ընդհանուր բնույթի ծախսեր	85.8	20.1	94.5	20.7	112.4	22.9
1.2	շրջակա միջավայրի պահպանություն	62.2	14.6	76.8	16.8	73.0	14.9
1.3	մշակույթ	36.6	8.6	35.8	7.9	35.1	7.2
1.4	կրթություն	179.2	41.9	167.8	36.7	184.3	37.6
1.5	սոցիալական օգնություն	9.9	2.3	12.0	2.6	15.8	3.2
1.6	պահուստային ֆոնդ, որն ուղղվել է ֆոնդային բյուջե	53.5	12.5	70.0	15.3	69.6	14.2
2	Ֆոնդային բյուջեի ծախսեր	18.3	100.0	11.0	100	90.0	100.0

Համայնքի վարչական բյուջեն ունեցել է աճ: 2014թ. բյուջեի աճը կազմել է 7.0% 2013թ. համեմատությամբ, կամ 29.7 մլն. դրամի չափով, իսկ 2015թ. բյուջեի աճը 2014թ-ի համեմատությամբ՝ 7.3%, կամ 33.3մլն. դրամ:

2013-2015թթ. ընթացքում համայնքի վարչական բյուջեի միջին տարեկան կառուցվածքն ունեցել է հետևյալ պատկերը՝

- կրթության ծախսեր - 36.8 %
- ընդհանուր բնույթի համայնքային ծախսեր - 21.3%
- շրջակա միջավայրի պահպանություն /աղբահանություն և սանմաքրում/ 15.4%
- մշակույթի գծով ծախսեր - 7.8%
- սոցոգնություն 2.7%

14.0% կամ միջին տարեկան հաշվարկով 64.4 մլն. դրամ վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ուղղվել է ֆոնդային բյուջեի կապիտալ ծախսերի կատարմանը:

Համայնքային բյուջեի եկամուտների գալիք 5 տարիների կանխատեսման արդյունքում բյուջեի ծախսերի կատարման իրատեսական պատկերը, կառուցվածքը, տեսակարար կշիռները պահպանվելու են այնպես ու այն չափերով, ինչը թվարկվեց վերևում:

ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ. ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Եկամտատեսակները	Ընդամենը	այդ թվում՝	ֆոնդային մաս
		վարչական մաս	
2	4	5	6
ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ այդ թվում՝	483800,0	483800,0	39945,0
1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ			
1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից այդ թվում՝	37000,0	37000,0	
Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար	27000,0	27000,0	
Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար	10000,0	10000,0	
1.2 Գույքային հարկեր այլ գույքից այդ թվում՝	57000,0	57000,0	
Գույքահարկ փոխադրամիջոցների համար	57000,0	57000,0	
1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ այդ թվում՝	9000,0	9000,0	
Տեղական տուրքեր այդ թվում՝	9000,0	9000,0	
ա) Համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարություն (տեղադրման) թույլտվության համար որից՝	140,0	140,0	
աա) Հիմնական շինությունների համար	70,0	70,0	
աբ) Ոչ հիմնական շինությունների համար	70,0	70,0	
բ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքներ (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) կատարելու թույլտվության համար	56,0	56,0	
գ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար	4,0	4,0	
դ) Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար	5400,0	5400,0	
ե) Համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության համար			
զ) Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար	300,0	300,0	
է) Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահունոլ խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար			
ը) Համաքաղաքային կանոններին համապատասխան Երևան քաղաքի և քաղաքային համայնքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար			
թ) Համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար	2805,0	2805,0	
ժ) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար	30,0	30,0	

ժա) Համայնքի տարածքում (բացառությամբ թաղային համայնքների) մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար	65,0	65,0	
ժբ) Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար	200,0	200,0	
1.4 Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ այդ թվում՝	5000,0	5000,0	
Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր այդ թվում՝	5000,0	5000,0	
ա) Քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումներում փոփոխություններ, լրացումներ, ուղղումներ կատարելու և վերականգնման կապակցությամբ վկայականներ տալու համար	2800,0	2800,0	
բ) Նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայություններ կատարելու, նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, նշված մարմինների կողմից գործարքների նախագծեր և դիմումներ կազմելու, փաստաթղթերի պատճեններ հանելու և դրանցից քաղվածքներ տալու համար	2200,0	2200,0	
1.5 Այլ հարկային եկամուտներ այդ թվում՝			
Օրենքով պետական բյուջե ամրագրվող հարկերից և այլ պարտադիր վճարներից մասհանումներ համայնքների բյուջեներ որից՝			
ա) Եկամտահարկ			
բ) Շահութահարկ			
գ) Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ			
Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից զանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ			
2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ այդ թվում՝	340998,7	340998,7	
2.1 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից այդ թվում՝			
Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետությունների տեղական ինքնակառավարման մարմիններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով			
2.2 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից այդ թվում՝			
Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետությունների տեղական ինքնակառավարման մարմիններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով			
2.3 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից այդ թվում՝			
Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով			
2.4 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից այդ թվում՝			
Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով			

2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից	340998,7	340998,7	
որից՝			
ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	336997,7	336997,7	
բ) Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ այդ թվում՝			
բա) Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող՝ ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստների պետության կողմից փոխհատուցվող գումարներ			
բբ) այլ դոտացիաներ			
գ) Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	4001,0	4001,0	
դ) ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ որից՝			
երևան քաղաքի համաքաղաքային նշանակության ծախսերի ֆինանսավորման նպատակով ձևավորված միջոցներից			
2.6 Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից			
այդ թվում՝			
ա) Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)			
բ) ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ որից՝			
երևան քաղաքի համաքաղաքային նշանակության ծախսերի ֆինանսավորման նպատակով ձևավորված միջոցներից			
3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	34801,3	34801,3	39945,0
այդ թվում՝			
3.1 Գույքի վարձակալությունից եկամուտներ	20000,0	20000,0	
այդ թվում՝			
Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	4000,0	4000,0	
10. Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպում

նպատակներ -

- ✓ Հիմնանորոգել և կահավորել կոնֆերենս-դահլիճ.
- ✓ Իրականացնել համայնքային միջոցառումներ, որոնց առանցքում երիտասարդներին վերաբերող խնդիրներն են.
- ✓ Նպաստել միջազգային ծրագրերում սևանցի երիտասարդների ներգրավմանը.

Առանցքային ցուցանիշներ	Թիրախային արժեք						
	2015	2016	2017	2018	2019	2020	2021
Համայնքի միջոցներով կազմակերպված ծրագրերի և միջոցառումների քանակ	16	21	26	32	38	44	50
Միջազգային ծրագրերում երիտասարդների ներգրավվածության թիվը	5	5	7	10	15	18	24

Նախատեսվող ծրագիր /ծրագրեր/

1. ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Ուսումնառող քաղաքներ» ցանց

Արդյունք - Իրականացված է ուսումնառության գործընթացի կայուն զարգացումը, որի հիմքում լավագույն փորձի փոխանակումն է՝ միջազգային հարթակի ստեղծմամբ: Ծրագրի ընթացքում իրականացվել են ուսումնառության տարբեր բաղադրիչներին միտված դասընթացներ, սեմինարներ, որոնց շնորհիվ համայնքն ունի կրթության ոլորտում նորարական նոր ծրագրեր՝ ներառական կրթությունից մինչև հեռահար ուսուցում:

Համայնքի աշակերտությունն ու երիտասարդությունը ներգրավված է ծրագրում:

2. Կոնֆերենս-դահլիճի հիմնանորոգում և կահավորում

Արդյունք - Առկա է համայնքապետարանի և համաքաղաքային միջոցառումների՝ հանրային քննարկումների, հանդիպումների, ասուլիսների, կոնֆերանսների, ֆորումների անցկացման համար հիմնանորոգված, կահավորված տարածք: Աշխուժացել և առավել հաճախակի են դարձել կազմակերպվող միջոցառումները: Դահլիճը տրվում է նաև վարձակալությամբ, որը համայնքի համար եկամտի լրացուցիչ աղբյուր է:

3. Ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում երիտասարդների փոխանակում

Արդյունք - Սևանի և քույր քաղաքների միջև ստորագրված Հուշագրի ուղղություններից մեկը՝ երիտասարդների փոխանակումը, լիովին արդարացված է և նպատակային: Փոխայցելությունների արդյունքում ձևավորվում է նոր մշակույթ, իրականացվում են բազմաթիվ նախաձեռնություններ, երիտասարդների համար ուսումը շարունակելու նոր հեռանկարներ են ուրվագծվում:

11. Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանում

նպատակներ -

- ✓ Աջակցել համայնքում գործող սոցիալական ձեռնարկությունների գործունեությանը և ստեղծմանը.
- ✓ Ապահովել այն միջոցառումների քանակական և որակական կողմը, որոնք խրախուսում են հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը, և դերակատարումը.

Առանցքային ցուցանիշներ	Թիրախային արժեք						
	2015	2016	2017	2018	2019	2020	2021
Համայնքային կյանքում կազմակերպվող միջոցառումներ, որոնց մասնակցել են հաշմանդամություն ունեցող անձիք (որպես ընդհանուր միջոցառումների թվաքանակի տոկոս)	7%	9%	12%	16%	20%	25%	29%

Նախատեսվող ծրագիր /ծրագրեր/

1. Աջակցություն սոցիալական ձեռնարկատիրությանը

Արդյունք - Սևանում գործում է «Երկնային մանանա» սոցիալական ձեռնարկությունը, որն աշխատանքով է ապահով համայնքային խնդիրներ ունեցող անձանց՝ ինտեգրելով հասարակությանը, ապահովելով նրանց կայուն եկամուտը: Համայնքն իր աջակցությամբ ապահովում է սոցիալական ձեռնարկության աշխատանքների շարունակականությունը, նոր գործընկերներ և բարերարներ է ներգրավում գործընթացում՝ ընձեռելով նոր աշխատատեղերի ստեղծման, արտադրական հզորությունների ավելացման հնարավորություն:

12. Բարեգործության խթանում՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով

նպատակներ -

- ✓ Մասնակցել բարեգործական ուղղվածություն ունեցող ծրագրերին նոր գործընկերներ ձեռք բերելու համար՝ խրախուսելով բարեգործական նախաձեռնությունները.
- ✓ Ապահովել բարերարների և շահագրգիռ անձանց ներգրավվածությունը համայնքային առաջնահերթ խնդիրների լուծմանը.

Առանցքային ցուցանիշներ	Թիրախային արժեք						
	2015	2016	2017	2018	2019	2020	2021
Բարեգործական ուղղվածություն ունեցող ակցիաներ և նախաձեռնություններ	2	2	3	5	7	9	10

Նախատեսվող ծրագիր /ծրագրեր/

1. Բարեգործական համերգների, ճաշկերույթի և ներկայացումների կազմակերպում

Արդյունք - Կազմակերպվում են բարեգործական ճաշկերույթներ, տոնավաճառներ, համերգներ, որոնց ընթացքում հանգանակված գումարը օգտագործվում են համայնքային առաջնահերթությունների լուծման համար, միաժամանակ բարեսիրական նոր ծրագրերի իրականացման համար ձեռք են բերվում գործընկերներ /անհատ և կազմակերպություն/:

13. Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն

նպատակներ -

✓ Իրականացնել սոցիալական խնդիրների մեղմացման քաղաքականություն.

Առանցքային ցուցանիշներ	Թիրախային արժեք						
	2015	2016	2017	2018	2019	2020	2021
Սոցիալական պաշտպանությանը ուղղված ֆինանսական միջոցների հատկացում	16մլն.	17.5մլն.	5մլն.	7մլն.	9մլն.	10մլն.	12մլն.

Նախատեսվող ծրագիր /ծրագրեր/

1. Հասցեական սոցիալական օժանդակություն

Արդյունք - Համայնքի խոցելի խմբերին՝ տարեցներ, բազմազավակ ընտանիքներ, գործազուրկներ, մեկից ավելի ուսանողներ ունեցող, կերակրողին կորցրած, Հայրենական Մեծ պատերազմի վետերանների, Արցախյան հերոսամարտում զոհվածների ընտանիքներ, հատկացվում է ֆինանսական օգնություն, ինչպես նաև՝ խորհրդատվական, օժանդակության մյուս հատվածը համապատասխան կառույցների հետ աշխատանքն է, մարդկանց ուղղորդելը:

2. Համալիր սոցիալական ծառայության կենտրոնի ստեղծում

Արդյունք - Միավորված են 3 սոցիալական ծառայությունները մեկ կենտրոնի կազմում: Համապատասխան տարածքը հիմնանորոգված է, կահավորված և հարմարեցված այցելուների համար: Առավել դյուրին է դարձել սոցիալական հարցերի լուծման շղթան. խնայվում են ժամանակ և ռեսուրսներ:

14. Մարդկային ռեսուրսների կառավարում

նպատակներ -

- ✓ Պլանավորել մարդկային ռեսուրսների առաջարկն ու պահանջարկը.
- ✓ Նպաստել վերապատրաստման դասընթացների արդյունավետությունը՝ ստեղծելով հանարվորություններ աշխատողների զարգացման, մասնագիտական որակների բարձրացման համար

Առանցքային ցուցանիշներ	Թիրախային արժեք						
	2015	2016	2017	2018	2019	2020	2021
Վերապատրաստման մասնագիտական որակավորման դասընթացներին մասնակցած աշխատակիցների թիվը	8	14	20	20	25	28	30

Նախատեսվող ծրագիր /ծրագրեր/

1. ՏԻՄ-ում մարդկային ռեսուրսների կառավարման նոր գործիքների ներդրում

Արդյունք - Տեղական մակարդակում առկա է պատշաճ կառավարում, որի համար ներդրվել է ստանդարտ գործիքակազմի նոր մոտեցում: Բարելավված են պաշտոնի անձնագրերը, կատարված է աշխատանքի կատարողականի գնահատում, ներդրված է գնահատման նոր մոդել: Կիրառվում են պաշտոնի անձնագրեր նաև հայեցողական պաշտոն ունեցող անձանց համար: Աշխատանքները դարձել են առավել համակարգված, արդյունավետ, ռեսուրսների կառավարման գործընթացը բարելավված է:

ՀՀԶԾ ֆինանսավորում (տես կից հավելվածը)

Այս բաժնում նկարագրված է, թե ինչ միջոցներով են ֆինանսավորվելու ՀՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերը: Այդ նպատակով կազմված է ՀՀԶԾ ֆինանսավորման ամփոփաթեթը:

Ամփոփաթեթում առանձնացված են հետևյալ աղբյուրները՝

- Համայնքի սեփական եկամուտներ,
- Ներքին պաշտոնական դրամաշնորհներ
- Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ,
- Բարեգործություն/նվիրատվություն,
- Վարկեր/փոխառություններ,
- Համայնքների խոշորացմանն օժանդակելու նպատակով դոնոր կազմակերպությունների կողմից տրամադրված միջոցներ,
- Այլ աղբյուրներ:

ՀՀԶԾ մոնիթորինգ

Իրականացման փուլում գտնվող ծրագրերը պետք է մոնիթորինգի ենթարկվեն: Մոնիթորինգը կառավարչական գործիք է, որը հնարավորություն է տալիս հսկել ծրագրերի կատարման ընթացքը և անհրաժեշտ փոփոխություններ նախաձեռնել: Մոնիթորինգն իրականացվում է համապատասխան կատարողականի ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ հավաքագրելու և ցուցանիշների փաստացի արժեքները թիրախային արժեքների հետ համեմատելու միջոցով: Համեմատության միջոցով հնարավոր է լինում չափել ծրագրի առաջընթացը, հաջողության աստիճանը, ծրագրով պայմանավորված փոփոխությունները կամ գնահատել ծրագիրն իրականացնողի կատարողականը:

ՀՀԶԾ մոնիթորինգի համար մշակված է մոնիթորինգի պլան, որը սահմանում է մոնիթորինգային ցուցանիշների հավաքագրման հաճախականությունը, աղբյուրն ու մեթոդը: Մոնիթորինգային ցուցանիշների մասին տեղեկություններ պետք է հավաքագրվեն կիսամյակային կամ տարեկան կտրվածքով: Մոնիթորինգի հաշվետվությունը համայնքի ավագանուն պետք է ներկայացվի ամեն տարի, հաշվետու տարվան հաջորդող տարվա առաջին եռամսյակում:

Ծրագրի մոնիթորինգի պլանը լրացվում է համաձայն կից հավելվածի:

Ուղղակի արդյունքների և ռեսուրսների ցուցանիշները և ցուցանիշների թիրախային արժեքները սահմանվում են համայնքի կողմից:

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

«Համայնքում և մարզում արտադրվող ապրանքների էքսպո-ցուցահանդեսի անցկացում»
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Գործարար միջավայրի բարելավում և ձեռնարկատիրության խթանում						
Ծրագրի անմիջական նպատակ Աջակցել արտադրողներին, նորարարական գաղափարներ ունեցողներին:	Ցուցանիշներ Էքսպո ցուցահանդեսների անցկացում	Ելակետային արժեք 2016 -	Թիրախային արժեքներ 2017 2018 2019 2020 2021 - 1 2 2 3				
Ծրագրի միջանկյալ արդյունքներ Շուկաներ գտնելու, սեփական արտադրանքն ու գաղափարը հանրայնացնելու լավագույն հարթակի ստեղծում, աշխատատեղերի ստեղծման հնարավորություն, արտադրական ծավալների մեծացում:	1. Ցուցանիշներ Ներգրավված են արտադրողներ	Ելակետային արժեք 2016 -	Թիրախային արժեքներ 2017 2018 2019 2020 2021 - 20 25 30 35				
Ծրագրի հիմնական գործողությունները	2. Ցուցանիշներ Նոր շուկաների և գործընկերների ներգրավում	Ելակետային արժեք 2016 -	Թիրախային արժեքներ 2017 2018 2019 2020 2021 - 3 5 7 9				
Ծրագրի բյուջեն	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Համայնքում և մարզում արտադրության ոլորտում գործող անհատ ձեռնարկատերերի, ընկերությունների ճշտում: 1.2. Էքսպո ցուցահանդեսի համար համապատասխան տարածքի առանձնացում: 1.3 Կազմակերպչական աշխատանքների իրականացում: 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Էքսպո ցուցահանդեսի կազմակերպում: 2.2 Նոր գործընկերների ձեռքբերում:						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Ընթացիկ ծախսեր Կապիտալ ծախսեր Ընդհանուր բյուջեն 1.000.000						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Տեղեկատվության ապահովում, համագործակցություն համապատասխան կառույցների հետ, համապատասխան տարածքների առկայություն շուկայի մասնագետների ներգրավում:						
Ծրագրի հիմնական շահառուները	Արտադրողներ, արտադրանք իրացնողներ, աշխատանք փնտրողներ, գործընկեր համայնքներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2018-2021						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի զարգացման հիմնական ուղղություններից մեկը փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումն է, որի հենքի վրա բարելավվելու է գործարար միջավայրը: Ներկայումս համայնքում չեն իրականացվում այնպիսի միջոցառումներ, որոնք հնարավորություն կտան ընդհանուր պատկերացում ունենալ արտադրական ներուժի, առկա շուկաների վերաբերյալ: Նշված ծրագրի իրականացմամբ ի մի է բերվելու արտադրական ողջ պոտենցիալը, միմյանց են հանդիպելու արտադրողն ու սպառողը, որոնց շնորհիվ ստեղծվելու են նոր աշխատատեղեր, հիմնվելու են նոր արտադրություններ, ընդլայնվելու են արդեն իսկ գործող արտադրությունների ծավալները, արտերկրի գործընկերների հետ մշակվելու են արտահանման և ներմուծման ծրագրեր:						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

**«Գործարարության արդի հիմնախնդիրները, ոլորտային մարտահրավերները և հեռանկարները»
համաժողովի անցկացում** **»**

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Գործարար միջավայրի բարելավում և ձեռնարկատիրության խթանում						
Ծրագրի անմիջական նպատակ Նպաստել համայնքում գործարարության զարգացմանը:	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Համաժողովի անցկացում	-	-	1	-	1	-
Ծրագրի միջանկյալ արդյունքներ Տեղի և արտերկրի շուկաների ուսումնասիրում, առաջարկի և պահանջարկի գնահատում, ներդրումային ծրագրերի իրականացում, ներդրումներ կատարելու հնարավորության ընձեռում, տեղեկատվության տրամադրում և տարածում:	1.						
	Ցուցանիշներ Ներդրումային ծրագրերի իրականացում	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	1	3	3	5	6
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1. Արտերկրի և հանրապետությունում գործընկեր համայնքների հետ նախնական պայմանավորվածության ձեռքբերում:</p> <p>1.2. Աշխատակարգի և օրակարգի մշակում:</p> <p>1.3 Կազմակերպչական աշխատանքների իրականացում:</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>2.1. Համաժողովի անցկացում:</p> <p>2.2 Ծրագրերի մշակման փուլ:</p>						
Ծրագրի բյուջեն	<p>Ընթացիկ ծախսեր՝ 400.000</p> <p>Կապիտալ ծախսեր՝</p> <p>Ընդհանուր բյուջեն՝ 400.000</p>						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Տեղեկատվության ապահովում, համագործակցություն համապատասխան կառույցների հետ:						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ոչ բավարար մասնակցության ապահովում						
Ծրագրի հիմնական շահառուները	Գործընկեր համայնքներ, գործարարներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2018-2021						
Ծրագրի համառոտ նկարագրություն	<p>Համայնքի զարգացման հիմնական ուղղություններից է գործարար միջավայրի բարելավումը, որը հնարավորություն կտա ապահովել ներդրումային ծրագրերի հոսքը: Համաժողովի աշխատանքներին մասնակցելու են տեղացի և արտերկրի գործարարները, որոնք ներկայացնելու են ոլորտային հիմնախնդիրները, լուծման ուղիները, այն ծրագրերը, որոնք լինելու են արդյունավետ երկուստեք: Համաժողովի ընթացքում կնքվելու են նախնական համաձայնագրեր, որոնք թույլ կտան ներկրելու և արտահանելու պահանջարկ վայելող որոշ արտադրատեսակներ, ինչպես նաև համատեղ արտադրություններ հիմնելու առաջարկներ կմշակվեն:</p>						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

«Սևանի թիվ 1 «Բողբոջ» մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Նախադպրոցական կրթություն և արտադպրոցական դաստիարակության կազմակերպում					
Ծրագրի անմիջական նպատակ Ապահովել ժամանակակից պահանջներին համապատասխան շենքային պայմաններ, երեխաների համար գրավիչ և զարգացնող միջավայր	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		Հիմնանորոգված նախադպրոցական հաստատություն	2016	2017	2018	2019
	1. Ցուցանիշներ Ժամանակավոր աշխատատեղերի ստեղծում	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
Ժամանակավոր աշխատատեղերի ստեղծում		2016	2017	2018	2019	2020 2021
2. Ցուցանիշներ Երեխաների թվի աճ		Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
	Երեխաների թվի աճ	2016	2017	2018	2019	2020 2021
	Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1 Շինարարական աշխատանքների մրցույթի հայտարարում 1.2 Պայմանագրերի կնքում 1.3 Շինարարական աշխատանքների վերահսկման համայնքային խմբի ստեղծում 1.4 Շինաշխատանքների իրականացում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1 Շինաշխատանքների ավարտական փուլ 2.2 Գույքի ձեռքբերում 2.3 Կատարած աշխատանքների ընդունում /շնորհանդես/				
Ծրագրի բյուջեն Ընթացիկ ծախսեր՝ 15.000.000 Կապիտալ ծախսեր՝ 200.000.000 Ընդհանուր բյուջեն՝ 215.000.000						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ Ֆինանսական, կապալառու կազմակերպություն						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ծրագրի իրականացման համար դոնոր կամակերպության բացակայություն					
Ծրագրի հիմնական շահառուները	2-6 տարեկան երեխաներ, ծնողներ, աշխատակիցներ					
Ծրագրի սկիզբ և ավարտ	2018-2019					
Ծրագրի համառոտ նկարագրություն	Սևանի թիվ 1 «Բողբոջ» մանկապարտեզը գործում է 30 տարուց ավելի և այդ ընթացքում հիմնանորոգում չի իրականացվել, կատարվել են մասնակի վերանորոգման աշխատանքներ, որոնք բավարար չեն: Մանկապարտեզի շենքը տիպային է, նախատեսված 320 երեխայի համար, սակայն ներկայումս հաճախում է 95 երեխա, որի պատճառներից 1-ինը շենքային ոչ բավարար պայմաններն են: Մանկապարտեզի շենքի հիմնանորոգմամբ և կահավորմամբ հնարավորություն կստեղծվի բեռնաթափելու հարակից երկու մանկապարտեզները, միաժամանակ կստեղծվի հարմարավետ և անվտանգ միջավայր: Ծրագրի իրականացումը համայնքի բյուջեի միջոցներով հնարավոր չէ, համայնքը կարող է համաֆինանսավորել					

ծրագիրը: Նմանատիպ հաջողված ծրագրերը առկա են՝ թիվ 4 «Գալիք», թիվ 2 «Զարթոնք» մանկապարտեզների շենքերի հիմնանորոգում Տարածքային զարգացման հիմնադրամի կողմից:

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր
« Վ. Սարգսյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում կամ ամրացում»
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Նախադպրոցական կրթություն և արտադպրոցական դաստիարակության կազմակերպում						
Ծրագրի անմիջական նպատակ Ստեղծել ժամանակակից պահանջներին համապատասխան և անվտանգ միջավայր ապահովող շենքային պայմաններ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	300 աշակերտ	171					
	30 դասատու 18 դասարան	24 15					
Ծրագրի միջանկյալ արդյունքներ Երեխաների հաճախելիության թվի աճ, կրթական գործընթացի արդյունավետություն, ժամանակակից չափորոշիչներին համապատասխան պայմանների ապահովում	1.	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	2.	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ						
	1.1 Շինարարական աշխատանքների մրցույթի հայտարարում						
	1.2 Պայմանագրերի կնքում						
	1.3 Շինարարական աշխատանքների վերահսկման համայնքային խմբի ստեղծում						
1.4 Շինաշխատանքների իրականացում							
2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ							
2.1 Շինաշխատանքների ավարտական փուլ							
2.2 Գույքի ձեռքբերում							
2.3 Կատարած աշխատանքների ընդունում /շնորհանդես/							
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 20.000.000 Կապիտալ ծախսեր՝ 180.000.000 Ընդհանուր բյուջեն՝ 200.000.000						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Ֆինանսական, մասնագիտացված կառույցներ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Անհրաժեշտ գումարների բացակայություն						
Ծրագրի հիմնական շահառուները	6-18 տարեկան երեխաներ, մասնագետներ, ծնողներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2018						
Ծրագրի համառոտ նկարագրություն	<p>Վ. Սարգսյանի անվան երաժշտական դպրոցը համայնքի մշակութային այն եզակի օջախներից է, որը երաժշտական կրթությանը զուգահեռ պատրաստում է նաև երաժշտասեր լսարան: Դպրոցի շենքային պայմանները, մինչ շենքի վթարայնությունն էլ, եղել են ոչ բավարար, քանի որ դպրոցը գործում է հարմարեցված մասնաշենքում /նախկին մանկապարտեզ/:</p> <p>Հիմնանորոգելով դպրոցի շենքը՝ այդ ընթացքում հնարավոր է կատարել նաև լսարանների ավելացման, համապատասխան չափանիշներին հարմարացնելու աշխատանքներ, որը հնարավորություն կտա ունենալ հարմարավետ և անվտանգ միջավայր:</p> <p>Ծրագրի իրականացումը համայնքային բյուջեի միջոցով հնարավոր չէ, պետք է դիմել դոնոր կազմակերպությունների:</p>						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

Նախադպրոցական ուսումնական հաստատություններում ծնողական վարձավճարների գրոյացում (անվճար) _____»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Նախադպրոցական կրթություն և արտադպրոցական դաստիարակության կազմակերպում						
Ծրագրի անմիջական նպատակ Ապահովել անվճար նախադպրոցական կրթություն	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
	Անվճար նախադպրոցական կրթություն	2016	2017	2018	2019	2020	2021
		2000-7000 դրամ	0	0	0	0	0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ Երեխաների հաճախելիության աճ, աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
	Երեխաների թվի աճ	2016	2017	2018	2019	2020	2021
		650	680	700	730	760	790
	2.	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
2016	2017	2018	2019	2020	2021		
Ծրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1 Ծնողական վարձավճարների վերանայման հարցի ներկայացում ավագանու նիստի քննարկմանը</p> <p>1.2 Հաստատում</p> <p>1.3 Մանկապարտեզներում սննդի տրամադրման համար գնման գործընթացի կազմակերպում</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>2.1 Համապատասխան գումարների տրամադրում</p> <p>2.2 Մանկապարտեզների սննդի տրամադրում</p> <p>2.3 Վերահսկողություն</p>						
Ծրագրի բյուջեն	<p>Ընթացիկ ծախսեր՝</p> <p>Կապիտալ ծախսեր՝</p> <p>Ընդհանուր բյուջեն՝ 170.000.000</p>						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Ֆինանսական, մասնագիտացված կառույցներ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Համայնքային եկամուտների ոչ բավարար վիճակ, իրավիճակի վերահսկողություն, սննդի որակ						
Ծրագրի հիմնական շահառուները	2-6 տարեկան երեխաներ, ծնողներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021						
Ծրագրի համառոտ նկարագրություն	<p>Համայնքում գործում է 5 մանկապարտեզ, որտեղ սահմանված են ծնողական վարձավճարներ. Գագարին գյուղում՝ 2000 դրամ, «Գալիք» մանկապարտեզում՝ 7000 դրամ, մյուս 3 մանկապարտեզներում՝ 6000-ական դրամ: Վերջին բարձրացումը ծնողական վճարների եղել է 2015թ-ին: Նախադպրոցական տարիքի երեխա ունեցող ոչ բոլոր ընտանիքներն են ի վիճակի վճարելու անհրաժեշտ գումարը, մանավանդ եթե մանկապարտեզ է հաճախում նույն ընտանիքից մեկից ավելի երեխա: Ծրագրի իրականացմամբ, որը կատարվելու է համայնքային բյուջեի հաշվին, ծնողներին հնարավորություն կտրվի օգտվելու մանկապարտեզների</p>						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

« Բազմաֆունկցիոնալ բեմահարթակ »
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպում՝ երիտասարդության ներգրավմամբ						
<p><i>Ծրագրի անմիջական նպատակ</i> Ստեղծել համապատասխան պայմաններ մշակութային միջավայրի զարգացման համար, ապահովել միջոցառումների որակական և քանակական բաղադրիչը</p>	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Ակտիվ երիտասարդություն	100 ակտիվիստ	120	140	180	200	200
	Տաղանդավոր երիտասարդների ներգրավում	Մոտ 25 արվեստագետ	28	31	34	37	300
Ավանդույթ դարձած ամենամյա միջոցառումներ	8 միջոցառում	10	13	16	18	20 միջոցառում	
<p><i>Ծրագրի միջանկյալ արդյունքներ</i> Միջոցառումների որակի և քանակի, ինչպես նաև համայնքի բնակիչների ներգրավվածության աճ:</p>	1.						
	<i>Ցուցանիշներ</i>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Բացօթյա միջոցառումների թվի աճ, որակի բարելավում	8 միջոցառում	7 միջոցառում				12 միջոցառում
		10	13	16	18		
Ներգրավված հանդիսատեսի թվի աճ	300	350	400	500	600	700	
Ծրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. բեմահարթակի մակետավորում 2. տարածքի ընտրություն 3. մրցույթի հայտարարում 4. համապատասխան պայմանագրի կնքում 5. աշխատանքների կատարման վերահսկողություն <p>1.2. 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <ol style="list-style-type: none"> 2.1. շնորհանդես 2.2. միջոցառումների անցկացում 2.3 բեմահարթակի վարձակալության համար պայմանագրերի կնքում 2.4 Հարթակների պահեստավորում 						
Ծրագրի բյուջեն	<p>Ընթացիկ ծախսեր՝ 300.000 Կապիտալ ծախսեր՝ 1.125.000</p>						

	Ընդհանուր բյուջեն՝ 1.425.000
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Մասնագետների ներգրավում
Ծրագրի հիմնական ռիսկերը	Քաղաքի եղանակային, կլիմայական պայմաններ Հանդիսատեսի պասիվություն
Ծրագրի հիմնական շահառուները	Մշակութային հաստատություններ Երիտասարդական ակումբ Համայնք Մարզ
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017 հունիս – 2017 հոկտեմբեր
Ծրագրի համառոտ նկարագրություն	<p>Այսօր Սևան համայնքում ունենալ բազմաֆունկցիոնալ շարժական բեմահարթակ հիմնախնդիրներից մեկն է: Տարվա կտրվածքով համայնքում կազմակերպվում են բացօթյա միջոցառումներ, որոնք անթույլատրելի են իրականացնել գետնին, ասֆալտի վրա: Նմանատիպ ասֆալտային միջոցառումները նսեմացնում են մշակույթ կոչվող բարձր երևույթը: Ինչպես նկատել է մշակույթի նախարարը՝ մարզերում էլ երեխան պետք է հասկանա, թե ինչ է բեմը: Բացօթյա միջոցառումները կնպաստեն նաև հասարակությանը ներգրավել մշակութային կյանք: Հասարակության մեջ մշակույթը պետք է դիտարկվի որպես գիտելիքների, արժեքային, բարոյական համակարգերի, իմաստների փոխանցման միջոց:</p> <p>Բեմահարթակն իր կառուցվածքով հարմար է օգտագործել նաև ցուցահանդեսների, դեֆիլենների և թատերական ներկայացումների համար : Հարթակը բաղկացած կլինի 8X6 մ /48քմ / ընդհանուր մակերեսով՝ 12 առանձին տումբաներից: Քանի որ մարզում նման կոնստրուկցիա չկա, կարող է տրամադրել նաև վարձակալության՝ հետագայում ծածկելով իր տեղափոխման և պահպանման ծախսերը :</p>

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

« Գրադարանային համակարգի վերազինում »
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպում՝ երիտասարդության ներգրավմամբ						
Ծրագրի անմիջական նպատակ Նպաստել գրադարանային գործի բարելավմանը	<i>Ցուցանիշներ</i>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
	Գրադարանը ապահովված է ժամանակակից տեխնիկական միջոցներով	2016	2017	2018	2019	2020	2021
		2	3	4	5	6	7
Ծրագրի միջանկյալ արդյունքներ Գրադարանը հագեցված է ժամանակակից տեխնիկական միջոցներով, առկա է գրադարանից օգտվողների թվի աճ, այն վերածվել է մշակութային հարթակի:	1.						
	<i>Ցուցանիշներ</i>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
	Տեխնիկական միջոցների ներգրավում	2016	2017	2018	2019	2020	2021
		2	1	1	1	1	1
	2.						
	<i>Ցուցանիշներ</i> Այցելուների թվի աճ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
	2016	2017	2018	2019	2020	2021	
	5363	5450	5550	5650	5750	6000	
Ծրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1 Գրադարանի կարիքների գնահատում 1.2 Տեխնիկական միջոցների համար հայտի ներկայացում</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>2.1 Գնման գործընթաց 2.2 Համապատասխան տեխնիկայի ձեռքբերում</p>						
Ծրագրի բյուջեն	<p>Ընթացիկ ծախսեր՝ Կապիտալ ծախսեր՝ Ընդհանուր բյուջեն՝ 2.000.000</p>						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ֆինանսական միջոցների բացակայություն						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի և տարածաշրջանի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021						
Ծրագրի համառոտ նկարագրություն	<p>Վ. Ստեփանյանի անվան գրադարանների կենտրոնացված համակարգը 2014թ-ին ստացել է հանրային գրադարանի կարգավիճակ, որը ենթադրում է գործունեության նոր որակ և հեռանկարներ: Գրադարանի բնականոն գործունեության համար անհրաժեշտ է տեխնիկական միջոցների ներգրավում, ինչի շնորհիվ կավելանան և այցելուների թիվը, և կգրանցվեն ոլորտային բարեփոխումներ: Տեխնիկական վերազինումն ապահովելու համար ակնկալվում է մշակույթի նախարարության աջակցությունը:</p>						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

« Մարզահրապարակների և խաղահրապարակների կառուցում, բարեկարգում և կահավորում /1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ միկրոթաղամասերի, Նալբանդյան փողոց թիվ 26, 45 և 65 շենքերի հարևանությամբ բակային տարածքներ/»
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպում՝ երիտասարդության ներգրավմամբ					
Ծրագրի անմիջական նպատակ Ստեղծել հարմարավետ պայմաններ ազատ ժամանցի կազմակերպման և բակային կյանքի մշակույթի ձևավորման համար:	Ցուցանիշներ անվտանգ, ապահով միջավայրի ստեղծում. ազատ ժամանցի կազմակերպման պայմանների առկայություն. առողջ ապրելակերպի խթանում.	Ելակետային արժեք 2016	Թիրախային արժեքներ			
			2017	2018	2019	2020 2021
Ծրագրի միջանկյալ արդյունքներ Բակերում առկա են բարեկարգ կառուցապատված տարածքներ, լուծված է ազատ ժամանցի կազմակերպման խնդիրը:	1. Ցուցանիշներ կանաչ և բարեկարգ տարածքների առկայություն. Ժամանակավոր աշխատատեղերի ստեղծում	Ելակետային արժեք 2016	Թիրախային արժեքներ			
			2017	2018	2019	2020 2021
	2. Ցուցանիշներ համապատասխան կահավորված տարածքների առկայություն	Ելակետային արժեք 2016	Թիրախային արժեքներ			
			2017	2018	2019	2020 2021
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1 Թաղամասերի բնակիչների մասնակցությամբ ակտիվ խմբերի ընտրություն 1.2 Հանրային քննարկումների կազմակերպում 1.3 Նախագծերի կազմման փաթեթ 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1 Քանդման աշխատանքներ 2.2 Կառուցապատման աշխատանքներ 2.3 Արտաքին լուսավորության ցանցի անցկացում 2.4 Կանաչ տարածքների առանձնացում 2.5 Կահավորում, խաղամիջոցների և մարզական միջոցների տեղադրում					
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 2.000.000 Կապիտալ ծախսեր՝ 8.000.000					

	Ընդհանուր բյուջեն՝ 10.000.000
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Բանվորական ուժի ներգրավում
Ծրագրի հիմնական ռիսկերը	Անհրաժեշտ ֆինանսական միջոցների սղություն
Ծրագրի հիմնական շահառուները	Բնակիչներ, քաղաքի հյուրեր
Ծրագրի սկիզբ և ավարտ	2018-2021
Ծրագրի համառոտ նկարագրություն	<p>Բակային կյանքի աշխուժացման, ազատ ժամանցի կազմակերպման համար կարևորվում է խաղահրապարակների և մարզահրապարակների գոյությունը: Այդ ուղղությամբ անցած տարիներին կատարվել են ծրագրեր, որոնք բավարար չեն: Խաղահրապարակների և մարզահրապարակների համար արդեն իսկ կան հատկացված տարածքներ, դրանց մի մասը ժամանակին ծառայել է իր նպատակին, հետագայում մատնվել անուշադրության: Առանձնացված 9 տարածքներում կիրականացվեն կանաչ տարածքների, խաղային միջոցների, նստարանների համար համապատասխան տարածքներ, որոնք կուղեկցվեն շինարարական աշխատանքներով: Ակնկալվում է նաև բնակիչների ակտիվ մասնակցությունը: Ծրագրի իրականացմամբ կվերականգնվեն բակային լավագույն ավանդույթները:</p>

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

« Սևան քաղաքի հայորդաց տան հիմնանորոգում »
(Օրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպում՝ երիտասարդության ներգրավմամբ						
Օրագրի անմիջական նպատակ Ունենալ մարզամշակութային կառույց	<i>Ցուցանիշներ</i>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
	Մարզամշակութային կառույցի ստեղծում	2016	2017	2018	2019	2020	2021
		3	3	4	4	4	4
Օրագրի միջանկյալ արդյունքներ Ստեղծված են անհրաժեշտ պայմաններ երեխաների ազատ ժամանցի կազմակերպման, նախասիրությունների բացահայտման համար	1.	<i>Ցուցանիշներ</i>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
	Խմբերի և խմբակների ստեղծում	2016	2017	2018	2019	2020	2021
		54	54	54	64	66	66
	երեխաների և պատանիների ներգրավվածություն	904	930	930	1050	1100	1200
	2.	<i>Ցուցանիշներ</i>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
	Ժամանակավոր աշխատատեղերի ստեղծում	2016	2017	2018	2019	2020	2021
		10	15				
Օրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1 Շենքի հիմնանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի պատրաստում</p> <p>1.2 Համապատասխան փաստաթղթերի ներկայացում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին բարերարի ներգրավման համար</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>2.1 Կազմակերպչական աշխատանքների իրականացում</p> <p>2.2 Հիմնանորոգման գործընթաց</p>						
Օրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ Կապիտալ ծախսեր՝ Ընդհանուր բյուջեն՝						
Օրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Բարերար (ներ)						
Օրագրի հիմնական ռիսկերը	Համապատասխան ֆինանսների բացակայություն						
Օրագրի հիմնական շահառուները	Համայնքի երեխաներ, պատանիներ, բնակիչներ, հյուրեր, գործընկերներ						
Օրագրի սկիզբ և ավարտ	2018-2019						
Օրագրի համառոտ նկարագրություն	Սևան քաղաքի բանուկ թաղամասերից մեկում տասնամյակներ առաջ գործել է մշակույթի տուն, որը ազատ ժամանցի և մշակութային կյանքի կազմակերպման համար եղել է լավագույն վայր: Անցյալ դարի 90-ականներից այն դադարել է գործելուց, որի արդյունքում շենքը մատնվել է անգործության, շարքից դուրս են եկել կոմունիկացիաները: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դաստիարակչական կենտրոնը շենքը վերցրել է իր հաշվեկշռում և կատարել տանիքի վերանորոգման աշխատանք: Համաձայն դաստիարակչական կենտրոնի ծրագրերի՝ շենքում						

պետք է գործեր հայորդաց տուն, սակայն համապատասխան ֆինանսական միջոցների բացակայության պատճառով ծրագիրը կյանքի չկոչվեց: Բարերարների առկայության դեպքում հնարավոր է հիմնանորոգել շենքը, որը լիովին կծառայի իր նպատակին համապատասխան մարզական և մշակութային խմբակներով: Հայորդաց տան գործունեությամբ կլուծվի թաղամասի երեխաների զբաղվածության, արտադպրոցական առօրյան կազմակերպելու խնդիրը:

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

« Մարզամշակութային փառատոնների անցկացում »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսում						
<i>Ծրագրի անմիջական նպատակ</i> Ստեղծել մարզական, մշակութային կյանքի ակտիվացմանը նպաստող պայմաններ	<i>Ցուցանիշներ</i>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Մարզամշակութային միջոցառումների թվի աճ	46	50	56	63	66	75
<i>Ծրագրի միջանկյալ արդյունքներ</i> Համայնքում մարզամշակութային միջոցառումների թվի աճ, միջհամայնքային կապերի ապահովում	1.						
	<i>Ցուցանիշներ</i> Մասնակիցների ներգրավվածության աճ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	6000	6500	7000	7500	8000	8500	
	2.						
<i>Ցուցանիշներ</i>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					
	2016	2017	2018	2019	2020	2021	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1 Մարզամշակութային միջոցառումների անցկացման տարեկան պլանների կազմում 1.2 Համաձայն պլանի՝ միջոցառումների կազմակերպչական աշխատանքների իրականացում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1 Փառատոնների անցկացում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ Կապիտալ ծախսեր՝ Ընդհանուր բյուջեն՝ 5.000.000						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Սցենարների մշակում, անհրաժեշտ տեխնիկայի ապահովում						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Բացօթյա միջոցառումների համար եղանակային ոչ բարենպաստ պայմաններ						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի և տարածաշրջանի բնակիչներ, հյուրեր, զբոսաշրջիկներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքային կյանքի, միջհամայնքային կապերի ակտիվացմանը նպաստող գործունեության են մարզամշակութային փառատոնների անցկացումը, որը բացահայտում է նաև տաղանդավոր երեխաներին և երիտասարդներին, առաջացնում է հետաքրքրություն համայնքի նկատմամբ, մեծացնում զբոսաշրջային հոսքերը: Ծրագրի իրականացման ընթացքում արդեն ավանդույթ դարձած միջոցառումներին կգան լրացնելու որակապես և թեմատիկ առումով նորերը, որոնց շնորհիվ կմեծանա մասնակիցների և հանդիսատեսի թիվը:						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

« Ն. Դագարյանի անվան մարզադպրոցի մարզական գույքի ձեռքբերում »

(Օրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսում						
<i>Օրագրի անմիջական նպատակ</i> Ստեղծել մարզիկների պարապմունքների անցկացման համար անհրաժեշտ պայմաններ	<i>Ցուցանիշներ</i> Մարզադպրոցի գույքի հագեցվածություն	Ելակետային արժեք 2016	Թիրախային արժեքներ 2017 2018 2019 2020 2021				
<i>Օրագրի միջանկյալ արդյունքներ</i> Մարզական ցուցանիշների բարձրացում, առողջ ապրելակերպ, մարզիկների թվի աճ	1. <i>Ցուցանիշներ</i> Մարզական գույքի ձեռքբերում	Ելակետային արժեք 2016	Թիրախային արժեքներ 2017 2018 2019 2020 2021				
	2. <i>Ցուցանիշներ</i> Մարզադպրոց հաճախողների թվի աճ	Ելակետային արժեք 2016 335	Թիրախային արժեքներ 2017 2018 2019 2020 2021 350 400 450 520 600				
Օրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1 Մարզադպրոցի գույքի գույքագրում 1.2 Անհրաժեշտ գույքի հաշվառում 1.3 Գնման գործընթաց 1.4 Պայմանագրի կնքում</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>2.1 Մարզագույքի ձեռքբերում</p>						
Օրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր Կապիտալ ծախսեր Ընդհանուր բյուջեն՝ 6.000.000						
Օրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Օրագրի հիմնական ռիսկերը							
Օրագրի հիմնական շահառուները	Մարզադպրոց հաճախող երեխաներ և պատանիներ, մարզիչներ, կազմակերպող առաջնությունների և մրցելությունների մասնակիցներ						
Օրագրի սկիզբ և ավարտ	2018-2020						
Օրագրի համառոտ նկարագրություն	Մարզադպրոցում պարապմունքների բնականոնությունն ապահովելու համար զգացվում է մարզագույքի որոշ տեսակների կարիք, որոնց լրացմամբ կմեծանան պարապմունքների արդյունավետությունը, կավելանա հաճախող երեխաների թիվը: Օրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է ըմբշամարտի մարզագորգի, ծանրաձողերի, ֆուտբոլի, վոլեյբոլի, բասկետբոլի խմբերի պարապմունքներն ապահովող մարզագույքի ձեռքբերում:						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

Տանիքաշինություն

(Օրագրի անվանում)

« _____ »

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքում բնակարանային շինարարության խթանում և բնակարանային ֆոնդի պահպանում					
<i>Օրագրի անմիջական նպատակ</i> Բարելավել բնակարանային տնտեսության վիճակը	<i>Ցուցանիշներ</i> Հիմնանորոգված տանիքների ատկայություն	Ելակետային արժեք 2016 14	Թիրախային արժեքներ 2017 2018 2019 2020 2021 14 16 18 20 23			
<i>Օրագրի միջանկյալ արդյունքներ</i> Շենքերի անվտանգության աստիճանի բարձրացում, շահագործման ժամկետների երկարացում, օգնություն համատիրություններին	1. <i>Ցուցանիշներ</i>	Ելակետային արժեք 2016	Թիրախային արժեքներ 2017 2018 2019 2020 2021			
	2. <i>Ցուցանիշներ</i>	Ելակետային արժեք 2016	Թիրախային արժեքներ 2017 2018 2019 2020 2021			
Օրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1 Համատիրությունների կողմից առաջնահերթ հիմնանորոգում պահանջող տանիքների ցանկի ներկայացում.</p> <p>1.2 Ներկայացված առաջարկների կարիքների գնահատում.</p> <p>1.3 Հիմնախնդրի ներկայացում մարզպետարան:</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>2.1 Տանիքների հիմնանորոգման համար մրցույթի հայտարարում.</p> <p>2.2 Պայմանագրերի կնքում.</p> <p>2.3 Շինաշխատանքների իրականացում</p>					
Օրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ Կապիտալ ծախսեր՝ Ընդհանուր բյուջեն՝ 80.000.000					
Օրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ						
Օրագրի հիմնական ռիսկերը	Պետական դրամաշնորհներում խնդրի ներառումը					
Օրագրի հիմնական շահառուները	Տանիքների հիմնանորոգման կարիք ունեցող շենքերի բնակիչներ					
Օրագրի սկիզբ և ավարտ	2018-2020					
Օրագրի համառոտ նկարագրություն	Համայնքում կա 213 բազմաբնակարան շենք, որոնցից ամենաերիտասարդը կառուցվել է 80-ական թվականներին: Շենքերում առկա մի շարք հիմնախնդիրների կողքին զգացնել է տալիս տանիքների անմխիթար վիճակը, որը ստեղծում է բազմաթիվ անհարմարություններ հատկապես վերջին հարկերում բնակվողների համար: Անցած տարիների ընթացքում ներքին պետական դրամաշնորհների շնորհիվ հնարավոր է եղել հիմնանորոգել 14 տանիք: Առաջիկայում ևս նախատեսված է տանիքների հիմնանորոգման ծրագիրը, որը համայնքային բյուջեի միջոցներով հնարավոր չէ իրականացնել: Պետության կողմից տրվող նպատակային հատկացումների որոշ մասը պետք է ուղղվի տանիքաշինությանը:					

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

« Ծենքերի սեյսմակայունության բարձրացում, ամրացում »

(Օրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքում բնակարանային շինարարության խթանում և բնակարանային ֆոնդի պահպանում						
Օրագրի անմիջական նպատակ Ապահովել բնակֆոնդի պահպանությունը	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Օրագրի միջանկյալ արդյունքներ Ծենքերի վթարայնության աստիճանի որոշում, ամրացման աշխատանքների իրականացում	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Ցուցանիշներ Ամրացված են վթարային շենքերը	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
4		4	3	2	1	0	
Օրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1 Վթարային շենքերի ամրացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի պատրաստում.</p> <p>1.2 Ամրացման աշխատանքների կատարման մրցույթի հայտարարում.</p> <p>1.3 Պայմանագրերի կնքում:</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>2.1 Աշխատանքների իրականացում.</p> <p>2.2 Վերահսկողություն:</p>						
Օրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր Կապիտալ ծախսեր Ընդհանուր բյուջեն						
Օրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Օրագրի հիմնական ռիսկերը	Պետական դրամաշնորհներում խնդրի ներառումը						
Օրագրի հիմնական շահառուները	Վթարային շենքերի բնակիչներ						
Օրագրի սկիզբ և ավարտ	2018-2021						
Օրագրի համառոտ նկարագրություն	<p>Համայնքում կա 2013 բազմաբնակարան շենք, որոնցից մեծ մասն ունի մի շարք խնդիրներ: Դրանցից 4-ը մասնագիտական համապատասխան եզրակացությամբ ճանաչվել է վթարային, որը, սակայն քանդման ենթակա չէ: Գյուղ Գագարին, Գայի 1, ք. Սևան, Մայաթ-Նովա 19, Խաղաղության 16, Նաիրյան 4 շենքերի հետագա պահպանումն ապահովելու համար անհրաժեշտ է իրականացնել ամրացման աշխատանքներ, որը համայնքային բյուջեի միջոցներով հնարավոր չէ: Խնդրահարույց է նաև գ. Գագարին, Բաղրամյան 1 շենքի առկա վիճակը. շենքը չունի կոյուղագիծ, որի պատճառով կեղտաջրերը լցվում են շենքի նկուղ՝ ստեղծելով ոչ միայն հակահիգիենիկ վիճակ, այլ նաև թուլացնելով շենքի հիմքերը: Հրատապ է Բաղրամյան 1 շենքի հիմքերի ամրացման աշխատանքների իրականացումը:</p>						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

« Համայնքի կանաչ գոտիների գույքագրում, կանաչապատում և ծառատնկում »

(Օրագրի անվանում)

